ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4.2-26
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. ապրիլի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

2026 թվականի մարտի 12-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N2/4.2-26 արձանագրությամբ կայացված որոշման կատարման վերաբերյալ.

Նշվեց, որ

2026 թվականի մարտի 12-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N2/4.2-26 արձանագրությամբ որոշվել էր՝

➢ **առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպությանը՝ շտկել իրենց կողմից ներկայացված հայտերում առկա որոշակի տեխնիկական խնդիրներ և վերանայել ֆինանսական առաջարկները, մասնավորապես՝

• **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ին՝**

- վերանայել ներկայացված հայտի ֆինանսական առաջարկը՝ 4,516,000.0 (չորս միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամի (առանց ԱԱՀ) փոխարեն ներկայացնելով շուրջ 3,300,000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամի (առանց ԱԱՀ) չափով գումար,

- կցել հրավերի 2.4 կետի 4-րդ ենթակետով պահանջվող՝ նախկին փորձը հավաստող առնվազն 1 պայմանագրի հանձնման-ընդունման ակտերը,

- առաջարկել կազմակերպությանը իր կողմից նախատեսված գործունեությունը սկսել ոչ թե ապրիլի 1-ից, այլ, կամ ապրիլի 10-15 ընկած ժամանակահատվածում կամ մայիսի 1-ից:

• **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ին՝**

- վերանայել ներկայացված հայտի ֆինանսական առաջարկը՝ 4,000,000.0 (չորս միլիոն) ՀՀ դրամի (առանց ԱԱՀ) փոխարեն ներկայացնելով շուրջ 3,300,000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամի (առանց ԱԱՀ) չափով գումար, սակայն նվազեցումը կատարել միայն աշխատավարձի տողից:

Միաժամանակ նշվել էր, որ կազմակերպությունները Հանձնաժողովի կողմից առաջարկվող շտկումները կատարելուց և շտկված տարբերակները ներկայացնելուց հետո կճանաչվեն հաղթող:

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպություն՝

• **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ն,

• **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ն՝

ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել են որոշմամբ վերը նշված պահանջվող փաստաթղթերի շտկված տարբերակները:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի,
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ**-ի հետ՝ 3,300,000.0 (երեք միլիոն երեք հարյուր հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով,
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ**-ի հետ՝ 3,300,000.0 (երեք միլիոն երեք հարյուր հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան
(Հանձնաժողովի նախագահ) - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Լ.Բասմաջյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____